

ԿԱՐԵՆ ԱՂԱԶԱՆՅԱՆ

«Համար մեկ փաստաբանական գրասենյակ»
ՄՊԸ-ի տնօրեն

**ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ամփոփելով Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության իրավաօրենսդրական ապահովման հարցերի վերլուծությունը՝ կարելի է փաստել, որ, ընդհանուր առմամբ, ձեռնարկատիրական օրենսդրական հիմքերի զարգացման և կատարելագործման ռազմավարությունը պետք է ունենա այնպիսի ուղղվածություն, որ տվյալ հարաբերությունների կարգավորումը ենթաօրենսդրական և գերատեսչական մակարդակից հնարավորինս տեղափոխվի օրենքի մակարդակ:

Հիմնաբառեր – ձեռնարկատիրական գործունեություն, բիզնես, նորմատիվային ապահովում, օրենք, ենթաօրենսդրական ակտ, ռազմավարություն:

Ցանկացած ձեռնարկատիրական գործունեության կայացման և զարգացման հիմնական նախադրյալներից է օրենսդրական կայուն համակարգի ապահովումը, որն իր մեջ պետք է ներառի ոլորտը կարգավորող օրենքներ, կառավարության կողմից ընդունված որոշումներ, նախարարությունների ու գերատեսչությունների նորմատիվ ակտեր, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներ: Դրանք պետք է ապահովեն ձեռնարկատիրական գործունեության անխափան իրականացումը: Երաշխավորվածությունը ցանկացած գործունեության իրականացման առաջին գրավականն է, իրավական ապահովման հիմքը: Գրեթե մեկ դար առաջ (1922թ.) ռուս ականավոր տնտեսագետ Ն. Կոնդրատևը ելույթ ունենալով «Սովետական Ռուսաստանի գյուղատնտեսության քաղաքականության հիմնախնդիրները» համառուսաստանյան ագրոնոմիական երրորդ համագումարում արտահայտեց մի թևավոր միտք. «Քանի դեռ երկրում չի կարող լինել կայուն իրավական երաշխիքներ և երաշխիքներ այդ երաշխիքների իրավունքի պաշտպանության տեսքով, մինչ այդ տնտեսվարողը չի ունենա անհրաժեշտ հիմքեր նախաձեռնողական լարվածության տնտեսական գործունեության իրականացման համար»:

Հանրապետության տնտեսության արդյունավետ և բնականոն գործունեության առաջնային գրավականներից է ամբողջ տնտեսության ու նրա առանձին ոլորտների հարաբերությունների իրավական կարգավորվածությունը: Առանց հիմնավոր օրենսդրական դաշտի ոչ մի տնտեսական գործունեություն չի կարող անհրաժեշտ արդյունավետությամբ իրականացվել և միայն երաշխավորված

իրավական աղբյուրների հիման վրա է հնարավոր հստակություն ապահովել իրավատնտեսական հարաբերությունների հետագա զարգացման գործընթացում:

Ձեռնարկատիրական գործունեության իրականացման իրավական բազա է հանդիսանում ՀՀ Սահմանադրությունը, որի որոշ հոդվածներ կոչված են երաշխավորելու ձեռներեցության զարգացմանը: Այսպես, ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածով սահմանված է, որ. «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Սեփականատերը իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը, տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը»:

Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր քաղաքացի ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք»: 31-րդ հոդվածը իր հերթին սահմանում է. «Յուրաքանչյուր քաղաքացի ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք»: Պետությունը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում այս իրավունքի իրականացման համար: Իսկ, Սահմանադրության 46-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր,

www.journal.lawinstitute.am

տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ»² :

Ինչպես տեսնում ենք հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության ձևավորման և զարգացման իրավական հիմքը դրված է Սահմանադրության, իսկ շուկայական տնտեսության պայմաններում դրա հետագա խորացման և ընդլայնման համար կարևոր նախադրյալներ են համարվում ՀՀ քաղաքացիական, աշխատանքային, հողային, հարկային, մաքսային և այլ օրենսգրքերում և օրենքներում, ՀՀ Կառավարության որոշումներում, նորմատիվ իրավական բազմաթիվ ակտերում ներկայացվող պահանջները: Հարկ է նշել, որ Հայաստանի անկախության հռչակումից հետո անցած ժամանակաշրջանում ձեռներեցության իրավաօրենսդրական դաշտը հիմնականում ձևավորված է, բայց պարբերաբար տեղի են ունենում փոփոխություններ ու լրացումներ՝ կապված օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք պատճառների հետ:

Շուկայական հարաբերությունների պայմաններում ձեռնարկատիրական գործունեության զարգացման օբյեկտիվ պատճառներից են օրենսդրական դաշտի համապատասխանեցման անհրաժեշտությունը միջազգային տարբեր կազմակերպություններին անդամակցելու պայմաններում դրանց պահանջներին: Օրինակ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ), Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) ասոցացման ծրագրերին և այլն, որոնք պահանջում են ազգային իրավական դաշտը համակարգել նշված կազմակերպությունների կողմից ներկայացվող պահանջներին՝ կապված միջազգային պարտավորությունների կատարման հետ: Այսպես, երբ 2003 թվականին Հայաստանն անդամակցեց ԱՀԿ-ին, ստիպված փոխեց այդ կազմակերպության կողմից ներկայացվող ավելացված արժեքի հարկման շեմը, ինչը ուղղակիորեն իր ազդեցությունը թողեց ագրարային ոլորտում ձեռնարկատիրական գործունեության գործընթացի վրա: Ներկայումս մեծածավալ աշխատանքներ են տարվում հանրապետության հարկային և մաքսային դաշտը վերափոխելու ԵԱՏՄ-ի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան:

Իրավական դաշտի կարգավորման հարցում էական ազդեցություն են թողնում նաև սուբյեկտիվ գործոնները, որում առավել բացահայտ կերպով ընդգծվում է իրավական ակտերի որակական ոչ պատշաճ մակարդակը: Այն առավել բնորոշ է ինչպես հարկային համակարգի, այնպես էլ ընդհանուր իրավական դաշտի օրենսդրական հիմքերին, որոնք նույնպես անմիջականորեն առնչվում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների տնտեսական գործունեության

հետ: Որպես սուբյեկտիվ գործոն կարելի է առանձնացնել նաև օրենքների ընդունման գործընթացում հանդիպող անհարկի ձգձգումները, անպատասխանատվությունը այդ օրենքների ժամանակին ընդունման հարցում, ինչպես նաև օրենքների ընդունումից հետո ենթաօրենսդրական ակտերի ընդունման ձգձգումները: Բերենք միայն մեկ օրինակ: Դեռևս 2006 թվականին ՀՀ Կառավարությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակված «Գյուղացիական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացրեց ՀՀ Ազգային ժողով, որը վերջնական ընդունվեց և օրենքի ուժ ստացավ միայն 2015 թվականի դեկտեմբերին: Եթե «Կոոպերացիայի մասին» օրենքն ընդունվեր ժամանակին, ապա այն կնպաստեր ոչ միայն ձեռնարկատիրության զարգացմանը ագրարային ոլորտում, այլ նաև մանր գյուղացիական տնտեսությունների միավորմանը, գյուղատնտեսության արտադրության գործոնների (հող, կապիտալ, աշխատանք) կոնսոլիդացմանը, ինչը կբերեր ոլորտի տնտեսական արդյունավետության զգալի բարձրացմանը: Եվ ինչպես նշում է ագրարային տնտեսագիտության առաջատար մասնագետներից Ա.Բայադյանը. «Կարելի է ակնկալել, որ մոտ ապագայում ագրարային ոլորտում հաստատուն մրցունակություն ապահովելու գործում մեծ դեր կխաղան ռազմավարական նշանակություն և ուղղվածություն ունեցող կոոպերատիվների արմատավորումն ու զարգացումը»:

Օրենսդրական դաշտի որակական ցածր մակարդակը իր հերթին պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Որպես օբյեկտիվ գործոն կարելի է նշել՝

- անցյալում տեղի ունեցած տնտեսական փոփոխությունների հետևանքով օրենսդրական թերությունների առաջացումը,
 - օրենքների մշակման և ընդունման գործընթացում մասնակիցների իրավական գիտելիքների ցածր մակարդակը,
 - միջազգային փորձի կիրառման նկատմամբ բարձր հակվածությունը, որի արդյունքում օրենսդրությունում հաճախ տեղ են գտնում մոտեցումներ, որոնք մեր երկրի տնտեսական կյանքում իրատեսական չեն կոնկրետ ժամանակահատվածում օգտագործման տեսանկյունից, չեն բխում ազգային շահերից և նպատակներից,
 - օրենսդրության մշակման, ընդունման և կիրառման ընթացակարգերն ու կառուցողակարգերի անկատարությունը և այլն:
- Սուբյեկտիվ գործոնների շարքին են դասվում՝
- Օրենքների և իրավական ակտերի քննարկման հապճեպությունը:
 - Օրենսդրական դաշտի մշակման մասնագի-

տական կադրերի ցածր մակարդակը, հաճախ էլ դրանցով զբաղվող աշխատողների արհեսավարժական անբավարար աստիճանը:

- Օրենքների ընդունման գործընթացի քաղաքականացումը, որը բերում է կամայականության և ձևամոլության, ինչի համար էլ նպատակը ետ է մղվում երկրորդական պլան և այլն:

Ձեռնարկատիրական գործունեության ոլորտները կարգավորող օրենքների ու իրավական ակտերի որակական ոչ բավարար մակարդակը հաճախ արտահայտվում է ձևակերպումների երկիմաստության, կատեգորիաների բազմիմաստության, տարբերությունների հնարավորության, և որ, ամենավտանգավորն է՝ այլ օրենքների հետ ունեցած հակասությունների, կառավարման մարմինների միջև լիազորությունների ոչ հստակ բաշխվածությամբ, ինչն էլ նպաստում է կոռուպցիայի, անբարեխիղճ պաշտոնյաների կողմից կամայականությունների, սուբյեկտիվիզմի դրսևորումների: Նման պատկեր հանդիպում ենք մարզպետարանների և ՏԻՄ-երի միջև լիազորությունների բաշխման, տնտեսական ոլորտի գործունեության նկատմամբ վերահսկողությունների իրականացման դերակատարությունների բաշխման հարցերում: Այդ ամենը նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես ձեռներեցության օրենսդրական դաշտում, հաճախ խախտվում են իրավական հիմքերի կայունության, թափանցիկության, հստակության մոտեցումների սկզբունքները, որոնք էլ հանգեցնում են բացասական երևույթների՝ օրենքների կիրառման տեսանկյունից, քանի որ՝

- Օրենսդրական փոփոխություններն ու լրացումները ենթադրում են մասն ձեռներեցությամբ զբաղվող կազմակերպական կառույցներում համապատասխան փոփոխությունների իրականացում, ինչը՝ որոշ ժամանակով կարող է արգելակել ձեռնարկատիրական գործունեության զարգացման գործընթացը, անհրաժեշտություն է առաջանում նրանց երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերում կատարել փոփոխություններ՝ իրականացնելով լրացուցիչ ծախսեր և աշխատանքներ:

- Ձեռներեցություն իրականացնողները հնարավորություն չեն ունենում անմիջականորեն հետևել օրենսդրական փոփոխություններին, ինչի հետևանքով մեծանում է վերջիններիս կողմից ոչ ճիշտ որոշումների ընդունման հավանականությունը և տնտեսական ռիսկի աստիճանը, որոնք էլ կարող են բերել նշանակալի վնասների ու կորուստների:

- Պարբերաբար նոր պահանջների առաջացումը, հատկապես հարկային և հաշվապահական հաշվառման ոլորտներում, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողներին ստիպում է ծրագ-

րային ապահովվածության և կադրերի ընդգրկման ուղղությամբ կատարել լրացուցիչ ծախսեր, որն էլ մեծացնում է ձեռներեցության ծախսատարության մակարդակը, նվազեցնում տնտեսական գործունեության շահութաբերության աստիճանը և այլն:

Որպես կանոն, օրենսդրական դաշտի անկատարությունը բերում է չհամակարգված ու հակասական ենթաօրենսդրական ակտերի ընդունմանը, տարբեր կառույցների կողմից դրանց սուբյեկտիվ մեկնաբանությունների, խաթարում է ձեռներեցության համար սահմանված «խաղի կանոնները» և խոչընդոտում է ձեռնարկատիրական գործունեության գերատեսչական ու տարածաշրջանային զարգացման հնարավորությունները: Բացի այդ, օրենսդրական ակտերի հակասությունները, փոփոխականությունը և բազմիմաստությունը կապված տնտեսական վեճերի լուծման հետ, զգալի չափով բարդացնում են դատական մարմինների գործունեությունը, ինչի հետևանքով հաճախակի են դառնում ձեռնարկատերերի օրինական իրավունքների խախտման դեպքերը: Որպես հետևանք, նույն վեճի հետ կապված ինչպես դատական տարբերատարներ, այնպես էլ նույն ատյանի տարբեր դատարաններ, երբեմն ընդունում կամ կայացնում են իրար հակասող որոշումներ կամ վճիռներ, որոնք հիմնավորում են տարբեր իրավական ակտերով, դրանով իսկ բարդացնելով վերադաս ատյանի դատարանների համար՝ նշված տնտեսական վեճի առումով միանշանակ լուծում գտնելու հնարավորությունը: Օբյեկտիվորեն, այս պարագայում աճում է դատական մարմինների հանդեպ անվստահությունը, նրանց սուբյեկտիվիզմը, ինչը անկատար օրենքների հետ միասին ձեռներեցներին ստիպում է հաճախ դիմել վեճերի լուծման անօրինական մեթոդների կիրառմանը: Այն դեպքում, երբ ձեռներեցության օրենսդրական լիարժեք ապահովվածությունը, անկախ և օբյեկտիվ դատական համակարգի առկայությունը քաղաքակիրթ ձեռնարկատիրական գործունեության զարգացման կարևորագույն կարգավորիչ դեր կարող է խաղալ:

Անհասկանալի և անտրամաբանական են մասնալի դեպքերը, երբ ընդունված օրենքը «շրջանցելու» որոշումներ է կայացվում կառավարման տարբեր մարմինների կողմից: Այսպես, 2002 թվականին ընդունվեց «Պարենային անվտանգության մասին» ՀՀ օրենքը⁴, իսկ 2006 թվականին «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքը⁵, որոնց միջոցով պետք է կարգավորվի սննդամթերքի, դրա հետ շփվող նյութերի և սննդային հավելումների ներմուծման, արտահանման, արտադրության, մշակման, վերամշակման, փաթեթավորման, մակնշման, փոխադրման, պահպանման, իրացման ինչպես նաև՝ առևտրի ու հասարակական սննդի ոլորտում

ծառայությունների մատուցման փուլերում անվտանգության հետ առնչվող հարաբերությունները:

«Պարենային անվտանգության մասին» ՀՀ օրենքը կոչված է կարգավորելու ՀՀ պարենային անվտանգության ապահովման ոլորտում հարաբերությունները, ինչպես նաև՝ սահմանում է այդ ոլորտի կարգավորման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները: Դրանք են՝

- կենսապես կարևորագույն պարենային հումքի և սննդամթերքի տեղական արտադրության խթանումը,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի համապատասխան սննդամթերքի որակական հատկանիշների ապահովումը,

- Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը և դրա հիման վրա բնակչության գնողականության մակարդակի բարձրացումը,

- պետական պահուստում պարենային պաշարների կուտակումը և դրանց արդյունավետ օգտագործումը,

- պարենային շուկայի կարգավորմանն ուղղված միջոցառումների իրականացումը տեղական արտադրության և ներմուծման հաշվեկշռի կազմումը և դրա վերաբերյալ տեղեկատվության հավաքման և վերլուծության ապահովումը:

2015 թվականին ՀՀ վարչապետ Հ.Աբրահամ-

յանի նախաձեռնությամբ որոշում կայացվեց պարենամթերքի արտադրություններում կրճատել ստուգումները, որի արդյունքում հանրապետությունում զգալիորեն վատացան պարենամթերքի որակական ցուցանիշները: Բավական է բերել մեկ փաստ՝ 2017 թվականի հունվարին ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության տեսչության կողմից ստուգման ենթարկվեցին հացի և հացամթերքների արտադրության 23 արտադրամասեր, որի արդյունքում արձանագրվեց, որ նշված արտադրամասերից 21-ի ցուցանիշները չեն համապատասխանում պարենամթերքի անվտանգության պահանջներին⁶: Նման օրինակը եզակի չէ:

Այսպիսով, Հայաստանում ձեռներեցության օրենսդրական հիմքերի զարգացման և կատարելագործման ռազմավարությունը հնարավորություն կտա զգալիորեն կրճատել պետական չինովիկների կողմից կամայական որոշումների ընդունման, կոռուպցիայի, վարչական քաշքշուկների և այլ բացասական երևույթների օգտագործումը, որը ներկայումս ձեռնարկատիրական գործունեության զարգացման տեսանկյունից շատ հրատապ խնդիր է:

¹ Кондрагъев Н.Д., Особое мнение, М.-1922, Кн. 1, էջ 167.

² ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀ ՊՏ 2005 (հատ. թող.) 05.12.2005թ.:

³ Բայադյան Ա.Հ., Ֆինանսական միջոցների կազմավորման, օգտագործման և բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում, Ա.Բայադյան- Եր. ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ. 2016թ., էջ 167, 184

⁴ «Պարենային անվտանգության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2002/19(194) 19.06.2002թ.

⁵ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2006/14 (519) 20.12.2006թ.

⁶ Հարությունյան Ա., Ուսումնասիրություն հացի շուկայում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության Սննդի անվտանգության տեսչություն, 16.01.2017թ., <http://snund.am/ուսումնասիրություն-հացի-շուկայում> /16.01.2017թ.

Карен Агаджанян
Директор ООО “Адвокатская Контора Номер Один”

РЕЗЮМЕ

*Совершенствование системы нормативно-правовой поддержки
предпринимательской деятельности в Республике Армения*

Обобщая анализ вопросов законодательно-правового обеспечения предпринимательской деятельности в Республике Армения можно утверждать, что в общем смысле стратегия развития и совершенствования законодательных основ бизнеса должна иметь такую направленность, чтобы регулирование данных отношений от подзаконного и ведомственного уровня по возможности перешла на уровень законов.

Ключевые слова: предпринимательская деятельность, бизнес, нормативное обеспечение, закон, подзаконный акт, стратегия.

Karen Aghajhanyan
Director of LLC “Number One Attorney Office”

ABSTRACT

*Improvement of the system of normative and legal support
of enterprise activity in the Republic of Armenia*

Summarizing the analysis of issues of legislative and legal support of entrepreneurial activity in the Republic of Armenia, it is to be stated that, generally speaking, the strategy for the development and improvement of the legislative foundations of business should have such an orientation that the regulation of these relations, if possible, passes from the subordinate and departmental level to the level of laws.

Keywords: entrepreneurial activity, business, regulatory support, law, by-law, strategy.